ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2016 թ.
№ 12 (997)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 51 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԵՌՕՐՅԱ ԱՅՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը եռօրյա այցով Հայկական երկրորդ հանրապետությունում էր: Արցախ այցի նպատակը ինչպես գործնական էր, այնպես էլ ճանաչողական. «աբովյանականները» մասնակցեցին տարաբնույթ միջոցառումների, եղան պատմամշակութային վայրերում, այցելեցին սահմանամերձ զորամաս, իսկ Արցախի պետական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում մշակեցին հետագա անելիքները:

Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը մասնակցեց Ստեփանակերտի «Վերածննդի» հրապարակում մեծ շուքով նշվող Բերքի տոնին, որտեղ Արցախի բոլոր շրջաններից մայրաքաղաք ժամանած գյուղմթերք արտադրողները տոնական սեղաններ էին բացել՝ ներկայացնելով իրենց ձեռքով մշակած ու պատրաստած բերքն ու բարիքը:

Միջոցառման սկզբում Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանն օրհնեց հայրենի հողի մշակի արտադրած բերքն ու մաղթեց առատություն: Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը ևս շրջեց տաղավարներով, համտեսեց և ծանոթացավ ներկայացված արտադրանքին՝ ընդգծելով, որ բարի ավանդույթներն անհրաժեշտ է պահպանել ու շարունակաբար զարգացնել:

➤ 6

Ներառական կրթության խնդիրները

Մանկավարժական համալսարանում անցկացված «Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխումները ներառականության համատեքստում» խորագրով միջազգային աշխատաժողովը պաշտոնապես ազդարարեց ՅՈՒՆԻՍԵՖ-ի հովանու ներքո ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետի և ԱՄՆ-ի Մինեսոտայի համալսարանի համագործակցության մեկնարկը:

Անդրադառնալով մեր երկրում 2000 թվականից ներառական կրթության բարեփոխումների ընթացքին ու խնդիրներին՝ ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ասաց. «Մինչև 2025 թվականը անցումը համատարած ներառական կրթությանը, մեզ համար ունի գերկարևոր նշանակություն»: Ամենամեծ խնդիրը համարեց բարոյահոգեբանականը, նաև ընդգծեց, որ հատուկ կրթություն իրականացնող հաստատությունները պետք է դառնան մանկավարժահոգեբանական կենտրոններ:

➤ 2

Շախմատի միջազգային կոնֆերանսում

Հոկտեմբերի 1-2-ը Ծաղկաձորում անցկացվեց «Շախմատային կրթության տեսական և գործնական հիմնահարցերը դպրոցում» խորագրով միջազգային 2-րդ կոնֆերանսը, որը կազմակերպել էին Հայաստանի շախմատի ակադեմիան և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ Մանկավարժական համալսարանի, Շախմատի համաշխարհային ֆեդերացիայի (FIDE) և Հայաստանի շախմատային ֆեդերացիայի աջակցությամբ:

Կոնֆերանսին ներկա էին ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, Եվրոպայի շախմատի միության նախագահ Զուրաբ Ազմայպարաշվիլին, շախմատի հայաստանյան փորձով հետաքրքրված շուրջ 20 երկրի 50 ներկայացուցիչներ:

Բացման խոսքում ՀՊՄՀ-ի Շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ, շախմատի ակադեմիայի հիմնադիր նախագահ Սմբատ Լպուտյանն ընդգծեց, որ շախմատի հայկական փորձը հետաքրքրել է ամբողջ աշխարհին և կոն-

➤ 3

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ Տեմպուսի «Մահաթմա» ծրագրի ամփոփիչ համաժողովը, ուր ՀՀ բուհերի շահակիցներին ներկայացվեց «Մահաթմա» դրամաշնորհային ծրագրի իրականացման 4 տարվա կատարած աշխատանքների արդյունքները:

Համաժողովը նպատակ ուներ միաժամանակ ներկայացնել և փոխանակել ծրագրի իրականացման արդյունքում լավագույն փորձը, ինչպես նաև նորաստեղծ «Կրթության միջազգային ասոցիացիա»-ն և նրան անդամագրվելու առավելությունները:

Ներկաներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միր-

զախանյանը, ով հույս հայտնեց, որ համաժողովում հանգամանորեն կքննարկվեն վերոհիշյալ ընթացքի աշխատանքային հաջողությունները, ինչպես նաև կանդրադառնան խնդիրներին ու հեռահար նպատակներին:

➤ 3

Ներառական կրթության խնդիրները

➢1 Ներառական կրթության ոլորտի խնդիրների լուծման գործում ռեկտորը կարևորեց նաև մասնագիտական լուրջ ունակություններ ունեցող կադրերի պատրաստումը: «Մեր երկրում պրոֆեսիոնալ մասնագետներ պատրաստող միակ բուհը Մանկավարժական համալսարանն է,- ընդգծեց ռեկտորը՝ հավելելով, որ ներկա համագործակցությունը ենթադրում է ֆակուլտետի դասախոսներին փոխանցել ներառական կրթության կազմակերպման միջազգային փորձը, իրականացնել կրթական ծրագրերի և ֆակուլտետում դասավանդվող առարկաների բովանդակության վերանայում և բարեփոխումներ»: Գործընկերության շրջանակներում, միջազգային խորհրդատվության և տեխնիկական աջակցության շնորհիվ կամրապնդվեն համալսարանի կրթական, հետազոտական, ինչպես նաև ներառական կրթությանն արդյունավետ աջակցելու կարողությունները, Հատուկ կրթության ֆակուլտետին առընթեր կհիմնադրվի ներառական կրթությանն աջակցող կլինիկա (լաբորատորիա):

«Տարիներ առաջ սկսվեց ներառականության գործընթացը և երկարատև ու լուրջ ճանապարհ անցնելուց հետո տվեց իր արդյունքները. այսօր ԱՊՀ տարածքում հասարակական մտածողության մակարդակով ամենահանդուրժողը մեր երկիրն է: Տարիներ առաջ ծնողները դժվարությամբ էին ընդունում այս գործընթացը, սակայն այսօր այն ոչ միայն խոչընդոտ չէ, այլև արդեն այդ հարցի շուրջ հասարակության մեջ դրական վերաբերմունք է ձևավորվել»,- ասաց ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը:

Նախարարը ներառական կրթությունը դիտարկեց ավելի լայն, քան միայն հատուկ կարիքներ ունեցող մարդկանց հասարակության մեջ ներառելն է. «Այն ավելի խորը հասկացություն է: Նախարարությունը փորձում է արմատապես փոխել կառացվածքային ձևաչափը՝ հատուկ դպրոցներից անցում կատարելով դեպի բժշկահոգեբանական ծառայություն իրականացնող կենտրոններ»,- ընդգծեց Լևոն Մկրտչյանը և հավելեց, որ անհրաժեշտ է կառուցվածքային լուծումների ձևաչափով աստիճանաբար ներառականությունը ներմուծել ոչ միայն հանրակրթական, այլև բարձրագույն կրթական համակարգ»:

«ՀՊՄՀ-ի աշխատանքն կրթական գործում անգնահատելի է: ՀՀ-ում պետք է ապահովել դրական մթնոլորտ այս ծրագրի զարգացման համար. չպետք է շտապել, բայց նաև չուշանալ, փորձենք մեր ուժերի հնարավորության սահմաններում քայլ առ քայլ գնալ խնդիրների կատարմանը»,- ասաց Լևոն Մկրտչյանը:

Ազգային ժողովի առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանը կարևորեց աշխատաժողովը և հպարտությամբ նշեց՝ Հայաստանը խորհրդային երկրներից առաջինն էր, որ անդարադարձավ ներառական կրթության համակարգին:

Խոսելով երեխաների իրավունքների մասին՝ նա վստահեցրեց, որ խախտելով երեխաների իրավունքները, ստեղծում ենք թույլ բազա հասարակության ամուր հիմքերի համար: Նա Մանկավարժական համալսարանի ռեկտորին առաջարկեց մոդել ստեղծելիս՝ աշխատանքներ իրականացնել մանկապարտեզ-դպրոց, ապա նաև բուհ շղթայով:

Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ջեմմա Բաղդասարյանը ներառական կրթության ոլորտում կարևորեց երկու հիմնախնդիր՝ երեխաների կարիքների ճիշտ գնահատում և համապատասխան կրթություն ստացած մանկավարժական կադրերի ապահովում: Փոխնախարարն իր խոսքում ընդգծեց նաև, որ երեխաների կրթական իրավունքի խնդիրները վերաբերվում են յուրաքանչյուր քաղաքացու, քանի որ ներառական կրթությունը հիմքն է, որ դրվում է սոցիալական ներառական հասարակություն ունենալու հիմքում:

«Ներառական կրթությունը կարևոր է նաև մյուս սովորողների համար բարձրորակ կրթություն ապահովելու, ինչպես նաև խաղաղ և արդար հասարակություն ստեղծելու տեսանկյունից: Չնայած ձեռքբերումներին՝ 2015 թվականի տվյալներով, մեծ թիվ են կազմում նաև այն երեխաները, որոնք շարունակում են կրթություն ստանալ մեկուսացած պայմաններում: Հայաստանը դեռևս որոշակի ճանապարհ ունի անցնելու կրթական բոլոր մակարդակներում: Սա առանձնահատուկ կարևոր քննարկում ու աշխատաժողով է, ակնկալում եմ լավ արդյունքներ»,- ասաց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի պաշտոնակատար Լիվ Էլին Ինդրեյտենը:

ԱՄՆ փոխդեսպան Ռաֆիկ Մանսուրը դեսպանության անունից իրենց մշտական աջակցությունը հայտնեց ներառական բոլոր այն ծրագրերին, որոնցից կշահեն երկրի խոցելի երեխաները: Փոխդեսպանը շնորհակալություն հայտնեց յուրաքանչյուրին՝ հասարակության մեջ հավասարություն ստեղծելու և ՀՀ ում՝ ներառական կրթության զարգացմանն աջակցելու համար:

«Կրթության առանձնահատուկ խնդիրներ ունեցողների կրթության իրավունքը ամրագրված է մի շարք միջազգային փաստաթղթերում, որոնց անդամագրված է նաև Հայաստանը. պետք է դիմել հեղափոխական փոփոխությունների»,-նշեց ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանն ու վստահեցրեց, որ երկրի կառավարությունը ձեռնարկում է անցնում քայլեր իրականացնելու համար:

Պլենար նիստում զեկուցումով հանդես եկավ ՄԱԿ-ի մանկական հիմադրամի Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և անկախ պետությունների համագործակցության տարածաշրջանի ներառական կրթության ավագ փորձագետ Պաուլա Հանթը, որը ներկայացրեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան»:

ԱՄՆ Մինեսոտայի համալսարանի փորձագետ, գիտությունների դոկտոր Քրիս Ջանստոունը ներկայացրեց «Դասակարգումից դեպի ընդունակություն» թեմայով զեկուցում, որում անդրադարձավ, թե ինչ պատկերացում ունի հաշմանդամության մասին աշխարհն այսօր, ինչպես է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը բնութագրում հաշմանդամությունը:

Կարևորելով ներառական կրթության դերը՝ մասնագետը մեջբերեց Լև Վիկոցկու խոսքերը. «Անուշադրության մատնված ու իր բնական զարգացմանը թողնված խուլ ու համր երեխան երբեք չի սովորի խոսել, իսկ կույր մարդը երբեք չի կարողանա գրել: Այս դեպքում օգնության է գալիս կրթությունը՝ ստեղծելով արհեստական, մշակութային եղանակներ, այսինքն մշակութային նշանների ու սիմվոլների մի հատուկ համակարգ, որոնք հարմարեցված են ոչ նորմալ երեխայի հատուկ հոգե-ֆիզիոլոգիական առանձնահատկություններին»:

Աշխատաժողովին քննարկվեցին Մանկավարժական համալսարանի դերը ներառական կրթության բարեփոխումների ոլորտում, հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատումը, անհատական ուսուցման պլանները, հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցման մեխանիզմները, լոգոպեդիայի առկա խնդիրները. տեսությունից դեպի պրակտիկա և այլ հիմնահարցեր:

Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան Արմինե Ավագյանն ամփոփելով արդյունքները՝ վստահեցրեց, որ աշխատաժողովն ունեցավ դրական արդյունքներ. կլոր սեղաններն անցան բազմամարդ լսարաններում, բուռն քննարկումներով և վերհանվեցին կարևոր հիմնախնդիրներ: Դեկանի կարծիքով՝ առաջիկա կարևորագույն անելիքներից մեկը ուսուցիչների պատրաստման գործընթացում այլ մասնագիտությունների վրա ևս կենտրոնանալն է, որպեսզի ներառական կրթության գաղափարախոսությամբ շրջանավարտի պատրաստումը չլինի միայն Հատուկ կրթության ֆակուլտետի անելիքը:

«Յուրաքանչյուր առարկայի դասավանդման հիմքում պետք է ընկած լինի ներառականության գաղափարը, որ ավարտելիս արդեն ապագա մանկավարժն իմանա՝ բոլոր երեխաների բոլոր խնդիրները բոլորինս են»,-նշեց Արմինե Ավագյանը: Նա հավելեց՝ աշխատաժողովի արդյունքներից սկիզբ առավ մի կարգախոս, որն ամբողջովին նկարագրում է ոլորտի անելիքները. «Եթե ուզում ենք իրականացնել որակյալ ներառական կրթություն, ապա պետք է իմանանք, գործենք և հավատանք»:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԾԱՂԿԱՁՈՐՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը Ծաղկաձորում կայացավ «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության ամենամյա համաժողովը:

Համաժողովին ներկա էին ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ, ՀՀԿ Կանանց խորհրդի նախագահ Հերմինե Նաղդալյանը, ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Հայր Վարդան Նավասարդյանը, Կրթության պետական տեսչության պետ Արամ Կարապետյանը, քաղաքապետարանի ներկայացուցիչ Ռուզաննա Սիրունյանը, ԱԺ պատգամավոր Կարինե Աճեմյանը, «Դպրոց-կենտրոնների միություն» ԻԱՄ-ի ցանցի անդամ հանդիսացող ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ, կրթության ոլորտի պատասխանատուներ:

«Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միությունը արդյունավետ համագործակցության համար Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին շնորհակալագիր հանձնեց:

Համաժողովի ընթացքում դպրոց-կենտրոնների միության անդամներն ու դպրոց-կենտրոնների տնօրենները վարեցին սեմինարներ, մասնավորապես՝ անդրադառնալով դպրոցում օտար լեզվի և արտասահմանյան մշակույթի ներդրմանը, ներառական կրթության կազմակերպմանը, դպրոցավարության դժվարություններին, ներդպրոցական վերահսկողությանը, մեթոդմիավորումների աշխատանքներին, դպրոցում ՄՄ-ների աշխատանքի առավել արդյունավետ կազմակերպմանը, դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման նոր ձևաչափին և ինքնակրթությանը՝ որպես մանկավարժի մասնագիտական վարպետության բարձրացման միջոցի:

Ռուբեն Միրզախանյանը՝ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Գիտության և արվեստի պետրովյան ակադեմիայի իսկական անդամ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանն աշխատանքային այցով մեկնել էր Մոսկվա, որտեղ մասնակցել է Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի նիստին:

Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ մեր համալսարանի ռեկտորն արժանացել է պատվավոր պրոֆեսորի կոչման, ապա հանդես եկել զեկուցումով:

***

ՀՊՄՀ ռեկտոր, արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Միրզախանյանը վերջերս նաև ընտրվել է Սանկտ Պետերբուրգի Գիտության և արվեստի պետրովյան ակադեմիայի իսկական անդամ:

Հավելենք, որ ակադեմիան հիմնադրվել է 1724 թվականին՝ Պետրոս 1-ի հրամանով: Այն վերագրանցվել է Ռուսաստանում 1992 թվականին: Ակադեմիայի անդամներ են գիտության և արվեստի անվանի գործիչներ:

Քննարկվեցին շախմատի հիմնահարցերը

➤ 1 ֆերանսի մասնակից երկրները ցանկություն ունեն այն կիրառել իրենց երկրներում:

Սմբատ Լպուտյանը հույս հայտնեց, որ կոնֆերանսի ընթացքում հոգեբանները, սոցիոլոգներն ու մանկավարժները կներկայացնեն իրենց դիտարկումները և միջազգային կոնֆերանսի 2-րդ անգամ անցկացնելը պայմանավորեց Մանկավարժական համալսարանում Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիայի ստեղծմամբ. անհրաժեշտություն կա տարածել լաբորատորիայի կատարած աշխատանքների և հետազոտությունների արդյունքները:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը կարևորեց բուհի և գործընկերների համատեղ աշխատանքը՝ շախմատային ձեռքբերումները համարելով միասնական աշխատանքի արգասիք: Ռեկտորը ներկայացրեց նաև կրթության ոլորտում շախմատի մասսայականացման ու տարածման ուղղությամբ Մանկավարժական համալսարանի Շախմատի և սպորտի ամբիոնի և Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիայի աշխատանքներն ու ձեռքբերումները:

Երկօրյա կոնֆերանսի ընթացքում համալսարանի դասախոսներն ու Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիայի գիտաշխատողներն իրենց զեկուցումներում ներկայացրին կենտրոնի երկամյա գործունեության, հետազոտական աշխատանքների, ուսումնասիրությունների արդյունքները, ամբիոնի կողմից իրականացվող աշխատանքները, ինչպես նաև շախմատի դասավանդման արդյունավետության վերլուծությունները, ներառական կրթության համակարգում առարկայի ուսուցման խնդիրները:

Հատկանշական է, որ երկօրյա գիտաժողովի բոլոր քննարկումների ընթացքում Մանկավարժական համալսարանը Շախմատի համաշխարհային ֆեդերացիայի (FIDE) և եվրոպական գործընկերների կողմից դիտվում էր շատ կարևոր գործընկեր:

Արտասահմանյան գործընկերներն իրենց խոսքում ընդգծեցին, որ Մանկավարժականն աշխարհի միակ բուհն է, որ առավելագույնս խորացել է շախմատի դասավանդման հիմնախնդիրներում:

«Ցանկացողների համար մեր փորձն իսկական ուղենիշ է»,- ասաց «Շախմատի կրթական հետազոտությունների լաբորատորիա» հետազոտական ծրագրի ղեկավար Վահան Սարգսյանն ու հավելեց, որ ձեռք բերվեցին հետազոտությունների մասսայականացման, դրանք հրատարակելու կոնկրետ պայմանավորվածություններ:

Վերլուծեցին կրթության զարգացման միտումները

Մանկավարժական համալսարանի աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյանը Մոսկվայում մասնակցել է ԱՊՀ ուսուցիչների և կրթության ոլորտի աշխատողների 4-րդ համագումարին, որն անցկացվում էր «Նորարարությունները ժամանակակից կրթական միջավայրի որակի ու մատչելիության բարելավման գործոն ԱՊՀ անդամ պետություններում» խորագրի ներքո:

Երկօրյա համաժողովի ընթացքում մասնակիցները վերլուծել են ԱՊՀ երկներում կրթության զարգացման հիմնական միտումները, մշակել ԱՊՀ տարածքում կրթական գործընթացի միասնական նոր մոտեցումներ, ինչպես նաև իրականացրել նորարական գիտամանկավարժական փորձի փոխանակում:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ...

➤ 1 «Ծրագրի մեկնարկը համընկավ այն փոփոխություններին, որ իրականացնում էր Մանկավարժական համալսարանը՝ մագիստրատուրայի նոր դասընթացի մշակումը, փոխադարձ աշխատանքային այցելությունները նոր լիցք հաղորդեցին բարեփոխումների մթնոլորտին»,-ընդգծեց ՀՊՄՀ ռեկտորը՝ հատուկ շնորհակալություն հայտնելով գործընկերներին:

«Հայաստանի համար կրթական խնդիրները ամենաառանցքայինն են, հայ ժողովուրդը մշտապես մեծ տեղ է հատկացրել կրթության որակի բարձրացմանը՝ յուրացնելով արևմտյան կրթական համակարգի ձեռքբերումները»,- ասաց

ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը: Փաստելով այն, որ կրթության որակի բարձրացումը մեր երկրի համար օրվա հրամայական է, ՀՀ ԱԺ փոխնախագահը վստահեցրեց՝ որպես օրենսդիրներ մշտապես աջակցելու են նման ծրագրերին, քանզի «21-րդ դարը կրթության, գիտելիքի և կրթված մարդու դար է»:

2012 թվականին մեկնարկած ՏԵՄՊՈՒՍ-ի «Մահաթմա» դրամաշնորհային ծրագրի մեթոդաբանությունն ու ձեռքբերումները ներկայացրեց ծրագրի կառավարման խմբի անդամ Ռուզաննա Մինասյանը, իսկ ներկաների համատեղ աշխատանքի համար իր երախտագիտությունը հայտնեց Լուիգա Արդիգոնեն/Իտալիա/, ով վստահեցրեց, որ շատ հաճելի էր աշխատել հայ-վրացական կրթական բարեփոխումների համագործակցային դաշտում:

Ռ. Մինասյանը հանգամանորեն խոսեց բուհերի համար յուրահատուկ այս ծրագրի և իրենց առջև դրված խնդիրների մասին, որից առաջնայինը մագիստրոսական ծրագրերի մշակումն էր:

Ծրագրին մասնակցել են ՀՀ 4 բուհեր, 18 գործընկերների աջակցությամբ: Հատկապես մեծ աջակցություն են ցուցաբերել եվրոպական գործընկերները, Հայաստանի կրթության և գիտության նախարարությունը:

Մանկավարժական համալսարանն այն եզակի բուհերից է, որը համակարգելով տեմպուսյան ծրագիրը, իր հաստատության դռները լայնորեն բացեց ծրագրի առաջ:

«Կրթության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի ներդրում, Կրթության միջազգային ասոցիացիայի ստեղծում, վերապատրաստումներ, ուսանողների փոխանակում, գրախոսվող միջազգային պարբերականի ստեղծում և այլն. այս և մի շարք ձեռքբերումների թվում Ռուզաննա Մինասյանը հավելեց նաև ծրագրի իրագեկման ուղղությամբ տարված աշխատանքները՝ աշխատաժողովների կազմակերպումից մինչև սեմինարներ ու խմբային հանդիպումներ:

«Այսօր մենք ունենք փորձ, ուսանողներ, մշակված ծրագրեր, մոնիթորինգի հաշվետվություն, որոնք թույլ են տալիս շտկել թերություններն ու բացերը»,-ամփոփեց զեկուցողը:

Ծրագրի աշխարհագրությունն ընդգրկուն էր. այստեղ էին գործընկերներ ու մասնակիցներ Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Չեխիայից, Վրաստանից:

Համաժողովում լսեցին ու քննարկեցին տարբեր զեկուցումներ: Զեկուցողներն անդրադարձան ծրագրի կարևորությանը, կրթական ծրագրերի մշակմանը, կրթության կառավարման մեջ ուսանողների ներգրավմանը և այլ հարցերի:

ՀՊՄՀ-ից ելույթ ունեցան Տիգրան Այվազյանը («Մահաթմա» ծրագրի համակարգող), Ռիտա Գևորգյանը, Վահան Սարգսյանը:

Ներկայացնելով Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման հայաստանյան փորձը՝ ՀՊՄՀ-ի Կրթության կառավարում ամբիոնի վարիչ Ռիտա Գևորգյանը վստահեցրեց՝ ծրագիրը համահունչ է բուհում իրականացվող ռազմավարությանը և միտված է դիմակայելու կրթության ոլորտի մարտահրավերներին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հանդիպում ռեկտորի հետ

Մանկավարժական համալսարանիռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ընդունեց Մինեսոտայի համալսարանի պատվիրակությանը: Ռեկտորը հյուրերին ներկայացրեց Հայաստանի հարուստ մշակույթը և պատմությունը՝ հույս հայտնելով, որ նրանք ցանկություն կունենան ևս մեկ անգամ գալ Հայաստան:

Ռեկտորը ցանկություն հայտնեց, որ երկկողմանի համագործակցությունը շարունակվի ոչ միայն հատուկ կրթության ոլորտում, այլև այլ բնագավառներում:

«Մանկավարժական համալսարանը համագործակցում է աշխարհի առաջատար մի շարք բուհերի, մասնավորապես ԱՄՆ-ի Կոնեկտիկուտի համալսարանի հետ, որի կրթական համակարգը համարվում է լավագույնն աշխարհում: Այդ առումով մենք շատ բան ունենք սովորելու նրանցից և յուրաքանչյուր համագործակցությունից»,- ասաց նա:

Պատվիրակության անդամները ևս կարևորեցին Մանկավարժական համալսարանի հետ համագործակցությունը և ընդգծեցին, որ այն համագործակցելու լավագույն հարթակն է տվյալ ոլորտում: «Մենք այստեղ հրավիրված ենք որպես փորձագետներ, սակայն տեսանք, որ հայ մասնագետները նույնքան փորձառու են այս հարցում: Հուսով եմ՝ համագործակցությունը մոտ ապագայում կտա իր պտուղները»,- ասաց Մինեսոտայի համալսարանի պրոֆեսոր Ռենատա Տիչան:

Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան Արմինե Ավագյանն անդրադարձավ հատուկ մասնագետներ պատրաստելու բուհի մենաշնորհին՝ նկատելով, որ այն շատ պարտավորեցնող է:

Դեկանը կարևորեց ծրագրի շրջանակում ՅՈՒՆԻՍԵՖ-ի դերը և ընդգծեց, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը մինչև վերջ կանգնում է ծրագրի կողքին, քանզի նպատակը մեկն է՝ բոլոր երեխաների համար ապահովել լիարժեք կրթություն:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կրթական ծրագրերի ղեկավար Ալվարդ Պողոսյանը վստահ է, հաջողությունների հիմքն ապահովված է: «Մենք բաց ենք համագործակցության համար, սակայն հաջողությունն առավել է լինում, երբ դիմացինը մեկ քայլ ավելի առաջ է տեսնում, ինչպես դուք»:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը որպես անվտանգության հայեցակարգ

Հայաստանի քաղաքական վիճակը ճգնաժամային է և անհրաժեշտ է շտապ ելքեր և առաջացած խնդիրների համար լուծումներ գտնել, որոնք մեր երկիրը կտանեն բարգավաճման ու հզորացման ճանապարհով: Այս առումով քաղաքագետներին մեծ դեր է վերապահված. Նրանք պետք է կարողանան ստեղծված իրավիճակը քաղաքագիտության տեսանկյունից օբյեկտիվորեն ներկայացնել հասարակությանը, քաղաքագիտական խնդիրներից դեպի իրական ու իրատեսական լուծումներ տանող ուղիներ ներկայացնել, ստեղծել հասարակական կարծիք: Ցավոք, երբեմն քաղաքագետները իրական քաղաքական վիճակը բխեցնում են այս կամ այն կուսակցության շահերից՝ ստվերում թողնելով հասարակության շահը…

ՀՊՄՀ քաղաքագետները գտնում են, որ ճգնաժամը կհարթվի միայն քաղաքական հարցի լուծումից հետո, հարց, որ պետական և ազգային լուծումներ է պահանջում: Ժողովրդավարության ներկայիս գործող մոդելը չի կարող հայ ժողովրդին խոստումնալից ապագա ապահովել, ահա ինչու աշխատանքային երկար մտորումների ու փնտրտուքների արդյունքում հանգեցին երկրի համար կոնսոցիատիվ ժողովրդավարական նոր մոդելի ստեղծման գաղափարին: Հենց այս նոր մոդելի պարզաբանմանն ու քաղաքական ժամանակակից խնդիրներին էր նվիրված Մանկավարժական համալսարանում քաղաքագիտական լսումների հերթական թեմա՝ «Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը որպես անվտանգության հայեցակարգ կամ դոկտրին տարածաշրջանի և մեր երկրի համար» վերնագրով, իսկ զեկուցողը քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ Հայկ Սուքիասյանն էր:

Զեկուցողը դահլիճում ներկա դասախոսների և ուսանողների համար փորձեց գաղտնազերծել նոր հայեցակարգի առանձնահատկություններն

➤ 5

«Խնդրի լուծման ճանապարհը ոչ թե աշակերտին մաթեմատիկական գիտելիքներ տալն է, այլ մաթեմատիկայի միջոցով արժեհամակարգ ձևավորելը»,- ասում է պրոֆեսոր Համլետ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, ՀՀ գիտության պետական կոմիտեի և Կրթության ազգային ինստիտուտի համատեղ նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում անցկացվեց ,,Մաթեմատիկական կրթություն,, երկօրյա 4-րդ գիտաժողովը:

Գիտաժողովը բացեց ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: «Թեև յուրաքանչյուր մասնագետ կարծում է, թե իր ոլորտն է ամենակարևորը, բայց իմ խորին համոզմամբ, կա մի պարզ ճշմարտություն. գիտության և կրթության երկու կարևոր ուղղություններն են հայոց լեզուն, գրականությունը և մաթեմատիկան, որոնք դաստիարակում, ձևավորում են անձին»,- ասաց ռեկտոր Ռ. Միրզախանյանը:

Ռեկտորը ողջունեց ներկաներին՝ կարևորելով մասնագետների փորձի, մոտեցումների ու կարծիքների փոխանակման նման ձևը և մաղթեց արդյունավետ քննարկումներ:

Ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ անդամ Վանիկ Զաքարյանը: Նա խոսեց Մանկավարժական համալսարանում վերջին տարիներին իրականացվող լուրջ փոփոխությունների ու առաջընթացի մասին՝ փաստելով բուհի՝ գիտական հաստատությանը հավատարիմ լինելու հանգամանքը, ապա անդրադարձավ գիտաժողովի ծրագրում տեղ գտած հետաքրքիր և ուշագրավ զեկուցումներին, չմոռանալով ընդգծել մաթեմատիկայի և գեղեցիկի կապը:

Ներկաների համար «Մաթեմատիկայի էությունը և մաթեմատիկական կրթության առանձնահատկությունները» գաղտնազերծեց ՀՀ ԿԳ փոխնախարար, մանկավարժական գիտությունների դոկտոր Մանուկ Մկրտչյանը:

Բանախոսը թվարկեց ոլորտի մի քանի գլոբալ հիմնախնդիրներ, որոնք կարող են ուսումնասիրությունների առիթ դառնալ հատկապես ուսանողների համար, բարձրաձայնելով, թե՝ «մենք բոլորս մտագործունեության դաշտի տեսանկյունից մնացել ենք սովետական ժամանակաշրջանում»:

Հայաստանը 80-ական թվականներից հետո սկսեց գրեթե զրոյից, սակայն շուտով աշխարհում հայտնի դարձավ որպես բնագիտամաթեմատիկական ուղղությունների առաջատար:

Մ. Մկրտչյանի կարծիքով՝ ժամանակները փոխվել են և այսօր՝ արդեն 21-րդ դարում, մեր ազգը կրկին հնարավորություն ունի հանդգնել բնագիտամաթեմատիկական տիրույթում և հատկապես մանկավարժական ասպարեզում:

Ֆիզիկական աշխարհից զատ գոյություն ունի մեկ այլ՝ բոլորովին այլ աշխարհ՝ մաթեմատիկայի իրականությունը: Մաթեմատիկան հնարավորություն է տալիս թափանցել մարդկության փորձի ու փորձառության սահմաններից դուրս գտնվող տիրույթ... հանրահռչակ մտածողներից մեջբերումներ անելով՝ Մ. Մկրտչյանն ընդգծեց ևս մեկ հանգամանք, որ մաթեմատիկական մտածողությունն այսօր արդեն տեղափոխվել է սոցիալական աշխարհ:

Ամփոփելով ասելիքը՝ Մ. Մկրտչյանն ասաց. «Եթե մենք մաթեմատիկան դարձնենք հանրակրթական առարկա՝ կարևորը պետք է լինի ոչ թե մաթեմատիկական գիտելիքներ հաղորդելը, այլ մաթեմատիկական մտածելակերպն ու մաթեմատիկական կրթության բովանդակային կառուցվածքը: Դպրոցն իր առաջ պետք է հիմնական խնդիր դնի, այն է՝ մաթեմատիկական մտածելակերպի ձևավորում»:

Մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Համլետ Միքայելյանը հանդես եկավ «Որոշ նկատառումներ սովորողների արժեհամակարգի ձևավորման վերաբերյալ» զեկուցմամբ:

Պրոֆեսորն, իբրև նախաբան, համեմատեց արտասահմանյան թիմում խաղացող հայ ֆուտբոլիստի և հայ ֆիզիկոսի, մաթեմատիկոսի աշխատավարձերը՝ փաստելով ֆիզիկական և մտավոր աշխատանքի նյութական գնահատման հակասականությունը:

Եթե ԱՄՆ-ն աշակերտի վրա ծախսում է 10 հազար, ՀՀ-ն՝ 250 դոլար, ապա պարզ է դառնում, թե ո՛ր երկիրը ի՛նչ ներդրում է անում՝ ապագայի կադրեր պատրաստելու համար:

Զեկուցողը ցավով նկատեց, որ չկա երկրից դուրս եկող աշակերտների և ուսանողների արտահոսքի մասին ամփոփ վիճակագրություն: Մինչդեռ «Կրթությունը կազմակերպում է պետությունը իր հզորության և ապագայի համար». Հենց նա էլ պետք է համակարգի այս ամենը և կրթական խնդիրներին գտնի ճիշտ լուծումներ:

Անդրադառնալով մաթեմատիկական կրթության ոլորտի խնդիրներին՝ նա կրկին փաստեց, որ խնդրի լուծման ճանապարհը ոչ թե գիտելիքահեն կամ մաթեմատիկահեն կրթությունն է, աշակերտին մաթեմատիկա սովորեցնելը, այլ մաթեմատիկայի միջոցով արժեհամակարգ ձևավորելը՝ անցյալը-ներկան, նյութականը-հոգևորը, բարին-գեղեցիկը-ճշմարիտը, ազգայինը-համամարդկայինը:

Ամփոփելով՝ Հ. Միքայելյանը հստակեցրեց վերը ասվածը՝ այս ամենը պետք է դնել մաթեմատիկայի դասավանդման հիմքում: Ասել է թե՝ մաթեմատիկական կրթության հիմնական խնդիրը պետք է լինի մաթեմատիկայի միջոցով բարոյական արժեքների ձևավորումը:

«Մաթեմատիկական դպրոցի աշակերտների հարմարեցված կրթությունը՝ նրանց օժտվածության հաշվառմամբ» զեկուցմամբ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Ռոդինովն ու մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Տ. Չերնեցկայան ներկայացրին տարբեր դպրոցներում թեմայի վերաբերյալ կատարած հետազոտությունները:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վոլոշինովը հանդես եկավ «Մաթեմատիկան և էսթետիկան.Պյութագորասից մինչև Մանդելբրոտը» թեմայով զեկուցմամբ:

Երկօրյա գիտաժողովը տարբեր քննարկումների ձևաչափով փորձեց գտնել մաթեմատիկական կարևորագույն խնդիրների լուծման ուղիները:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը...

➤4 ու էությունը՝ հանդես գալով Հայաստանի համար շահեկան դիրք ապահովող մի շարք սկզբունքային առաջարկություններով:

ՀՊՄՀ քաղաքագետները կարծում են, որ քաղաքագիտական խմբի կողմից մշակված կոնսոցիատիվ ժողովրդավարության նոր մոդելի

միջոցով կապահովվի Այսրկովկասի անվտանգությունը և կառաջարկվի ժողովրդավարության զարգացում ոչ միայն տարածաշրջանի բազմակազմ հասարակություններում, այլև մեր երկրում՝ ենթադրելով հասարակության գերիշխանություն: Մոդելի կիրառումը պետք է սկսել հայաստանյան կուսակցություններից, արդյունքում կզտվեն գաղափարախոսություն չունեցող կուսակցությունները, իսկ գաղափարական հենքի վրա գործող կուսակցությունների դերը կբարձրանա:

Քաղաքական գիտությունների դոկտոր, Քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լևոն Շիրինյանը համոզված է, որ այս մոդելը մեր երկրին կտանի դեպի բարգավաճում ու հզորացում. ?Մենք պարտավոր ենք ազգովի հաղթահարել լացկանության վիճակը և ունենալ հպարտ ու զարգացած հայրենիք: Այս մոդելը ներկայացնելու ենք համայն հայությանը, որովհետև այն ներդաշնակության մոդել է?: Ըստ քաղաքագետի՝ հարկավոր է հաղթահարել հոգեբանական ճգնաժամը, թողնել պաշտպանողական մարտավարությունը և մի քիչ ագրեսիվ պահվածք դրսևորել:

Հայկ Սուքիասյանն էլ վստահ է, որ ցանկացած գիտություն, բացի գիտական հետազոտություններից, պետք է որոշակի լուծումներ առաջարկի երկրի անվտանգությանը: Այս մոդելը նա համարում է ներդաշնակության մոդել, ուր սոցիալական ամեն շերտ, ամեն ստրատա կունենա իր դերը՝ բացառելով բևեռացումը:

Պետք է լինել Հայաստանակենտրոն՝ ասում է Լևոն Շիրինյանը և այս հանդիպումը համարում նոր մոդելի արմատավորման մեկնարկը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Լսեցին օպարերկրյա դասախոսներին

ՅՈՒՆԻՍԵՖԻ հայաստանյան գրասենյակի ծրագրի շրջանակներում երկշաբաթյա այցով Հայաստանում էր Մինեսոտայի համալսարանի պատվիրակությունը: ՀՊՄՀ Հատուկ կրթության ֆակուլտետի նախաձեռնությամբ ամերիկյան համալսարանի 3 պրոֆեսորներ՝ Բրայան Աբերին, Ռենատա Տիչան և Սյուզան Օ՛քոնեը հյուրընկալվեցին Մանկավարժական համալսարանում: Նրանք հանդիպեցին թիմի անդամների, ֆակուլտետի՝ ծրագրում ներառված դասախոսների և ՀՊՄՀ պրոռեկտորների հետ՝ քննարկելով առաջիկա համագործակցության անելիքները:

Երկու տարի տևողությամբ ծրագիրը նախատեսում է փոխադարձ այցելություններ Մինեսոտայի և Մանկավարժական համալսարաններ, հանդիպումներ մասնագետների հետ, փորձի փոխանակում:

Հյուրերը հանդես եկան մի շարք դասախոսություններով, որոնք վերաբերում էին ֆակուլտետում դասավանդվող մասնագիտություններին և նեղ մասնագիտացումներին՝ հատուկ մանկավարժությանը, հատուկ հոգեբանությանը: Հոկտեմբերի 10-ին գիտական խորհրդի նիստերի դահլիճում ուսանողները լսեցին ամերիկյան ներառական կրթության համակարգին նվիրված դասախոսություն, ըստ որի կարողացան նկատել երկու երկրների ներառական կրթական համակարգերի ընդհանություններն ու առանձնահատկությունները:

Համագործակցությունը շարունակվում է

Մանկավարժական համալսարան էր այցելել Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի պատվիրակությունը, որի կազմում էին համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Գեորգի Ֆյոդորը, պատմության ինստիտուտի տնօրեն Սանդոր Օզենին, Գերմանիայի Լայպցիգի համալսարանի գիտաշխատող, դոկտոր Բալինտ Կովաչը, ինչպես նաև հնագիտության դասախոս Վագներ Զոլտը:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հյուրերի հետ աշխատանքային հանդիպման ընթացքում իր գոհունակությունը հայտնեց Եվրոպայի ամենահին կրթօջախներից մեկի՝ մեր բուհի հետ համագործակցության, ռեկտոր, պրոֆեսոր Սուրոմի Սաբոլչի Մանկավարժական համալսարանում ունեցած բացառիկ դասախոսության վերաբերյալ:

Ռեկտորը ներկայացրեց բուհի գործունեությունն ու ուղղությունները՝ նշելով, որ այն ՀՀ-ի երկրորդ խոշոր ուսումնական հաստատությունն է և պատրաստում է բազմապրոֆիլ մասնագետներ, որոնցից մի քանիսի մենաշնորհը Մանկավարժական համալսարանինն է: Ռուբեն Միրզախանյանը վստահեցրեց, որ երկու բուհերի համագործակցության սկիզբը ստացված է, և մի շարք ծրագրեր միմյանց հետ աշխատելու լուրջ հեռանկարներ են ստեղծում:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Գեորգի Ֆյոդորը մասնագիտությամբ արևելագետ է, ուստի հետաքրքրված է հայերենով, հայոց պատմությամբ ու գրականությամբ: Նա կարևորեց երկու համալսարանների համագործակցությունը և հավելեց՝ համագործակցությունն առավել ամրապնդելու և խթանելու համար ակնկալում են նաև Մանկավարժական համալսարանի պատվիրակության այցը Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարան:

Կողմերը զրույցի ընթացքում կարծիքներ փոխանակեցին ամառային դպրոցների ընթացքիվ մասին, քննարկեցին հայագիտական ամբիոնների և հետազոտությունների զարգացման նախադրյալներին վերաբերող հարցեր, խոսեցին կրեդիտային շարժունության եվրոպական ծրագրի շրջանակում բուհերի հետագա համագործակցության մասին:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Համագործակցության սերտ կամուրջ է անհրաժեշտ

Մանկավարժական համալսարանի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի (UNICEF) նախաձեռնությամբ Հատուկ կրթության ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկավ ԱՄՆ-ի Ֆրեզնոյի շրջանային հասարակական կազմակերպության ծրագրերի և գնահատման բաժնի տնօրեն Լիլիթ Ասադուրյանը: Առաջին անգամ հայաստանյան բուհերից հենց Մանկավարժական համալսարանում դասախոսությամբ հանդես գալը բանախոսը խորհրդանշական համարեց՝ ընդգծելով, որ ծնողները այս բուհի շրջանավարտ են:

«Զարգացման խանգարումներ ունեցող երեխաների զարգացման հետազոտումն ու մշտադիտարկումը» թեմայով զեկուցման մեջ բանախոսն անդրադարձավ երեխաների զարգացման, գնահատման կարևորությանը՝ նշելով, որ այն կօգնի ճիշտ ձևակերպել և անհատականացնել մոտեցումը, ճանաչումը, ուսուցումը երեխաների և ընտանիքների հետ: Այն հնարավորություն կտա հասկանալ երեխայի ընդունակությունները, հմտություններն ու կարողություններն ըստ իր տարիքային փուլի. «Երբ խոսում ենք փոքրիկ երեխաների զարգացման մասին, անհրաժեշտ է հաշվի առնել երեխային գնահատման չափանիշի օգտագործումը.այն հնարավորություն է տալիս նաև ծնողին՝ ճանաչելու իր երեխային: Զարգացման մասին անհնար է խոսել առանց ծնողի անմիջական մասնակցության, այդ իսկ պատճառով համագործակցության սերտ կամուրջ է անհրաժեշտ»:

Դասախոսությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց ներկաների շրջանում, ծավալվեց հարց ու պատասխան:

Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան Արմինե Ավագյանը նման դասախոսությունները շատ է կարևորում. «Նախ և առաջ այն հնարավորություն է տալիս ծանոթանալ դրսի փորձին, ձեռք բերել նոր գիտելիքներ: Սա նաև լավագույն առիթ է մեր շրջանավարտների համար շարունակական կապ պահել համալսարանի հետ՝ մասնակցելով նման դասախոսությունների»: Ըստ դեկանի՝ այսպիսի հանդիպումները լավ հարթակ են քննարկելու ոլորտի խնդիրները:

Այս և հոկտեմբերի 4-14-ը նախատեսված դասախոսությունների շարքը նվիրված է ֆակուլտետի ստեղծման 5-ամյակին:

Դասախոսությանը ներկա էին Հատուկ կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, շրջանավարտներ, ոլորտի մասնագետներ, ինչպես նաև Կալիֆորնիայի համալսարանի Առողջապահական և մարդկային ռեսուրսների սպասարկման հարցով դեկանի խորհրդի խորհրդական, Ռենեսանս կրթաթոշակի ծրագրի խորհրդատվական մարմնի անդամ Մարիոն Կարիանը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԵՌՕՐՅԱ ԱՅՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



➢1 Միջոցառմանը մասնակցող Մանկավարժական համալսարանի պատվիրակության կազմում էին պրոռեկտոր Արմեն Թամազյանը, գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը, Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ, ռազմական հոգեբան Հակոբ Թադևոսյանը, ինչպես նաև ուսանողներ՝ ուսանողական խորհդի նախագահ Ներսիկ Մարգարյանի գլխավորությամբ:

Մեր համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի մանկավարժության և երաժշտության բաժինների ուսանողներն ազգագրական պարերի շարանով, ազգային երգ ու պարով բարձրացրին ներկաների տրամադրությունը: Պարարվեստի մանկավարժության ամբիոնի դոցենտ Գոհար Աբրահամյանի կարծիքով՝ նման միջոցառումները ոչ միայն բարձրացնում են ներկաների տրամադրությունը, այլև հայրենասիրություն ու մարտական ոգի են հաղորդում. այն, ինչն այսօր անհրաժեշտ է մեր ժողովրդին:

Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը բերքի տոնի բարձր տրամադրությունն իր հետ տարավ Մեխակավանի (Զաբրահիլի) զորամաս, որտեղ զինվորները կազմ ու պատրաստ սպասում էին:

Պատվիրակությանը դիմավորեցին մեծ հանդիսավորությամբ՝ զինվորական նվագախմբի կատարումներով: Զինծառայողները շարահրապարակում էին, իսկ հրամանատարությունը՝ ամբիոնում:

Մանկավարժական համալսարանը դեռևս 1996 թվականից սերտորեն համագործակցում է ՀՀ ՊՆ-ի և ԼՂՀ ՊԲ-ի հետ. հագործակցությունը տարեցտարի առավել ընդգրկու ու բովանդակային է դառնում:

Մանկավարաժական համալսարանի ուսանողները հայրենասիրական երգ ու պարով իրենց երախտագիտությունը հայտնեցին զինվորներին՝ ևս մեկ անգամ ընդգծելով, որ հասարակությունը միշտ զինվորի կողքին է:

Մոնթե, Հերոս… Զինակից ընկերներն այսպես են դիմում քառօրյա պատերազմի մասնակից Արման Կիրակոսյանին: Թշնամու դեմ անհավասար մարտում 14 հոգուց միայն ինքն է ողջ մնացել ու մարտից դուրս եկել հաղթանակած. «Այս հաղթանակն ինձ համար լիարժեք չէ. այնտեղ ես կորցրի իմ 13 ընկերներին: Միակ բանը, որ այդ պահին մտածում էի, հաղթելու ցանկությունն էր: Ցավոք, խրամատում միայն ես մնացի…»,- սառնասրտորեն պատմեց Արմանը, որը 3 հրազենային վնասվածք է ստացել, իսկ փամփուշտներից մեկն անմիջապես սրտին էր դիպել. մահից փրկել էր ծոցագրպանում գտնվող զինվորական գրքույկը:

«Հայ զինվորն ամեն ինչի պատրաստ է, ոչնչից չի վախենում: Մեր ընկերների արյունն այնտեղ է թափվել, և մեր սահմանները պետք է սրբորեն պահենք»,- ասաց Արմանը և վստահեցրեց՝ զինվորական ծառայությունն ավարտելուց հետո, անհրաժեշտության դեպքում, միևնույն է՝ կռվելու է:

Շարքային զինծառայող Էդգար Ավետիսյանը Մանկավարժական համալսարանի պարարվեստի բաժնի ուսանող է. մեկ տարուց ավելի է, որ պարտադիր զինվորական ծառայություն է անցնում: Խոսելով ծառայության մասին, Էդգարն ընդգծում է՝ այն անցնում է շատ հետաքրքիր ու բավանդակալից, բարդություններ լինում են, սակայն ամեն բան հաղթահարելի է: «Վստահ եմ, որ ծառայության տարիներն իրենց կնիքը կթողնեն մեր հետագա կյանքի վրա, իսկ նման միջոցառումները զինվորի համար մեծ ուրախություն են: Դրանք օգնում են քաղաքացիական կյանքի կարոտն առնել»,- ասաց Էդգարը: Նա հպարտորեն բոլորին վստահեցնում է՝ ոչնչից չվախենալ ու չանհանգստանալ, քանզի թիկունքն ապահով է, սահմանին հայ զինվորն է կանգնած: «Բոլորիդ շատ սիրում ենք ու մինչև վերջ պատրաստ ենք պայքարել ձեզ համար: Կռիվ կտանք մինչև վերջին կաթիլ արյունը, բոլորս էլ ունենք մեր մեջ ուժ ու կամքը. հայ զինվորը ոչնչից չի

վախենում»,- ասաց Էդգար Ավետիսյանը:

«Վերջին լարված իրադարձություններին դուք ևս մասնակից եղաք հայոց սահմանների պաշտպանությանը: Մենք հանգիստ գլուխներս դնում ենք բարձին, որովհետև դուք այստեղ եք, դուք սահմանին եք, դուք եք պաշտպանում մեր ազգի գոյությունն ու պետականությունը»,- զինվորներին այսպես ողջունեց ՀՊՄՀ-ի Գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը և հորդորեց՝ իրենց մեջ կրելով հայրենիքն ու հայրենասիրությունը, մշտապես հիշել դեռևս օտարության մեջ գտնվող մեր տարածքների մասին:

ՀՊՄՀ-ի պրոռեկտոր Արմեն Թամազյանն էլ բարի ծառայություն մաղթեց բոլոր զինվորներին: Պատվիրակության այցի առաքելությունը պրոռեկտորը համարեց զինվորների հետ շփումը, նրանց մարտական ոգու բարձրացումն ու լավ տրամադրություն հաղորդելը:

ՀՊՄՀ Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ, ռազմական հոգեբան Հակոբ Թադևոսյանի կարծիքով բանակ-հասարակություն կապը մշտապես պետք է ամրապնդել և էլ ավելի զարգացնել համագործակցության ուղղությունները. «Համալսարանի և պաշտպանության բանակի ստորաբաժանումների միջև այցելությունների կարևորությունը կարող ենք պայմանավորել ռազմահայրենասիրական դաստիարակությամբ: Փոխաջակցության մթնոլորտի ձևավորման արդյունքում ուսանողները հասկանում են, որ զինվորը սահմանում պաշտպանում է մեր հայրենիքը, սակայն կարևոր է նաև իրենց դերակատարումն այդ գործընթացում: Երկրի համար լավ մասնագետ դառնալով՝ նրանք ևս այդ գործընթացի մասն են կազմում: Զինծառայողները, որպես սոցիալական խմբի ներկայացուցիչներ, ովքեր իրականացնում են հայրենիքի անմիջական պաշտպանությունը, այս ձեռնարկների միջոցով զգում են իրենց գործի կարևորությունը և որ գտնվում են հանրության ուշադրության կենտրոնում: Նրանց ծառայությունը, կրած դժվարությունները գնահատվում են բարձր և դառնում բացարձակ արժեքներ մեր երկրի և պետության անվտանգության պահպանման գործում»: Նա հավելեց նաև, ապագա զինվորների համար սա լավագույն հնարավորություն է մոտիկից ծանոթանալու զինվորական առօրյային, զինվորական ծառայության, կրթման առանձնահատկություններին, կարգացուցակին, կենցաղային պայմաններին, որպեսզի նրանք հետագայում հոգեբանորեն պատրաստվեն զինվորական ծառայությանը:

Զորամասի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ Ֆելիքս Ենգիբարյանը նկատում է՝ վերջին իրադարձություններից հետո առավել հաճախակի են դարձել նման միջացառումները զորամասում, իսկ բանակ-հասարակություն կապն էլ ավելի է ամրապնդվել. «Նման ձեռնարկների շնորհիվ զինվորները լիցքաթափվում են, կտրվում զինվորական առօրյայից, ոգեշնչվում հայրենասիրական երգից ու պարից, իրենց հարազատների կարոտն են առնում, որն էլ նպատում է ծանրաբեռնված ծառայությունն առավել հեշտ անցկացնելուն»:

Շնորհակալություն հայտնելով բոլոր կազմակերպիչներին և մասնակիցներին՝ նա հույս հայտնեց, որ նման այցերը կլինել առավել հաճախակի:

Բուհի ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը նկատում է՝ բանակի դռները միշտ բաց են ուսանողների համար. նման այցերը պարբերական բնույթ են կրում, որոնց միջոցով ուսանողական կառույցը փորձում է բարձրացել ուսանողների հայրենասիրությունն ու մարտական ոգին:

Պատվիրակության անդամներին հնարավորություն ընձեռվեց նաև ճաշել զինվորների հետ զինվորական ճաշարանում: Զորամասի ավագ խոհարար Նունե Առաքելյանը 16 տարի է իրականացնում է մարտական ծառայություն, որից 9 տարին՝ որպես զորամասի խոհարար. «Զինվորի համար կարևոր է նաև սնունդը, ➢7

ԵՌՕՐՅԱ ԱՅՑ...

➢ 6

փորձում եմ իրենց մայրերի նման համեղ պատրաստել: Ամեն օր միասնական աղոթում ենք մեր բոլոր զինվորների համար, որ անփորձանք ծառայեն և վերադառնան իրենց ընտանիքներ»:

Համալսարանականները շրջեցին նաև զորամասում, ծանոթացան զինվորների առօրյային, խնդիրներին, զրուցեցին նրանց հետ, տեսան և զգացին այն ամենն, ինչով երկու տարի ապրում է զինվորը:

Համալսարանի ներկայացուցիչները դատարկաձեռն չէին եկել՝ բերել էին ծխախոտ, քաղցրավենիք և զինծառայողներին անհրաժեշտ այլ պարագաներ, ինչպես նաև զորամասի գրադարանին նվիրեցին հայ դասականների հեղինակած 400 անուն գիրք:

«Հավսա՜ր, զգա՛ստ» շարային հանդիսավոր երթով էլ զինվորական ակնթարթներով լի հագեցած օրը մոտեցավ ավարտին: Ուսանողները հրաժեշտ տվեցին արդեն հարազատ դարձած զինծառայողներին և վերադարձան՝ վստահ լինելով, որ առաջնագծում թողել են հայրենիքի հզոր պաշտպան Հայ զինվորին, ում մարտական ոգին անպարտելի է:

Մանկավարժական համալսարանի պատվիրակության եռօրյա այցը Հայկական երկրորդ հանրապետություն ամփոփվեց Արցախի պետական համալսարանում:

Մանկավարժականի և Արցախի պետական համալսարանների միջև համագործակցությունը տարիների պատմություն ունի. երկու բուհերը համագործակցում են կրթադաստիարակչական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության ոլորտներում:

Աբովյանականները նախ հարգանքի տուրք մատուցեցին Արցախի համալսարանի զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակին, այնուհետև շրջեցին բուհում:

«Վերջին տարիներին ամուր համագործակցության հիմքեր են դրվել երկու համալսարանների միջև. համագործակցության ուղղությունները պետք է ավելի ընդլայնել՝ պրակտիկայի կազմակերպում, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակային ծրագրերի իրականացում և այլն: Դա երկուստեք անհրաժեշտ է և վստահ եմ, որ այն կլինի շարունակական»,- ասաց Մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Արմեն Թամազյանը:

Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը ևս կարևորելով երկու բուհերի միջև համագործակցությունն, ընդգծեց. «Այս համագործակցության շրջանակում իրականացնում ենք բազմաթիվ ուսումնական, գիտական, կրթական, մշակութային և այլ ուղղվածության միջոցառումներ:

Արցախի պետական համալսարանը ստեղծվել է մանկավարժական ինստիտուտի հենքի վրա և այս առումով ևս ՀՊՄՀ-ի հետ համագործակցությունը անհրաժեշտություն է: Այդ համագործակցությունը հաճելի գործընթաց է, քանի որ նպաստում է դասախոսական և ուսանողական կազմի շփումների արդյունավետության բարձրացմանը: Մանկավարժական համալսարանը նաև աջակցում է հայցորդների և ասպիրանտների գիտական թեմաների ղեկավարմանն առնչվող հարցերում»:

ՀՊՄՀ-ի գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի նախաձեռնությամբ Արցախի պետական համալսարանի գիտական գրադրանին նվիրաբերվեց 2015-2016 թթ. տպարգրած շուրջ 100 միավոր գիրք, որի մեծ մասը Մանկավարժական համալսարանի դասախոսական կազմի հեղինակած մանկավարժական ուղղվածության գրքերն էին: Վիտյա Յարամիշյանը երախտագիտություն հայտնեց գործընկեր համալսարանին արդյունավետ համագործակցության համար և հույս հայտնեց, որ փոխայցելությունները կկրեն պարբերական բնույթ:

ՀՊՄՀ-ի կազմակերպած «Ամառային դպրոց 2016» միջազգային ծրագրի մասնակից, Արցախի համալսարանի գերմաներեն և ֆրանսերեն լեզուների բաժնի ուսանողուհի Անի Հարությունյանը ևս կարևորում է երկու բուհերի համագործակցությունը:

«Այս համագործակցությունը և հատկապես «Ամառային դպրոց 2016» ծրագիրը մեզ մեծ հնարավորություն է ընձեռում, քանզի մեր համալսարանը պետական լինելու արդյունքում միջազգային ծրագրերի մասնակցության սահմանափակումներ ունի: Համա-

գործակցության արդյունքում ձեռք ենք բերում նոր կապեր, մասնագիտական ձեռքբերումներ, ընկերական միջավայր և բարեկամական շփումներ»,- ասաց Անին և հավելեց՝ մոտ ժամանակաշրջանում նախատեսվում է ուսանողների փոխայցելություններ, մասնակցություն մի շարք գիտական նստաշրջանների և գիտաժողովների:

Մանկավարժական համալսարանի պատվիրակության հագեցած եռօրյա այցը ԼՂՀ ամփոփվեց Արցախի պատմամշակութային վայրերի ճանաչողական այցով: Ուսանողները եղան Արցախի եկեղեցական համալիրներից Դադիվանքում, Գանձասարում, Ղարաբաղի խորհրդանիշ համարվող «Մենք ենք, մեր լեռները»՝ Տատ ու Պապի հուշարձանի մոտ, շրջեցին Ստեփանակերտում և գեղատեսիլ Արցախի տեսարժան այլ վայրերում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Սոցիալական մանկավարժը կոչում է և առաքելություն

Արդեն 6-րդ անգամ հոկտեմբերի 2-ին աշխարհը նշում է Սոցիալական մանկավարժի միջազգային օրը: Տոնն ընդունվել է 44 երկրների կողմից՝ արժևորելու և ընդգծելու սոցիալական մանկավարժի մասնագիտության հիրավի մարդասիրական էությունն ու կարևորությունը հասարակության առողջ զարգացման գործում:

Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը շնորհավորեց «Սոցիալական մանկավարժի պատրաստման և կայացման խնդիրները ՀՀ-ում» կլոր սեղանի մասնակիցներին տոնի առթիվ, որն առաջին անգամ էր նշվում:

Մանկավարժական համալսարանում: Միջոցառման նախաձեռնությունը բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Միշա Թադևոսյանինն էր:

Խոսելով տոնի խորհրդի, մասնագիտության կայացման ու խնդիրների մասին՝ Թոփուզյանը ձևակերպեց ինչ ասել է սոցիալական մանկավարժ, որ դա քիչ է անվանել մասնագիություն, և որ այն նախ և առաջ կոչում է ու առաքելություն:

«Մարդու մարդայնացման ջանքերն այսօր էլ շարունակվում են, փորձ է արվում աշխարհը հարմարեցնել մարդու կարիքներին»,-ամփոփեց Ա. Թոփուզյանը:

ՀՀ-ում «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության ձևավորման ու զարգացման ընթացքի և հեռանկարների մասին հանգամանորեն խոսեց մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հակոբ Թադևոսյանը: Զեկուցողը ոչ միայն վիճակագրական տեղեկատվությամբ ներկայացրեց մասնագիտության անցած դժվարին ճանապարհն ու ընթացիկ ձեռքբերումները, այլև ներկաների ուշադրությունը հրավիրեց ընդհանուր խնդիրների ու բացթողումների վրա:

Բանախոսի ներկայացմամբ մշակվել են «Սոցիալական մանկավարժություն» առարկայախմբի 52 դասընթացի փաթեթ, առարկայական ծրագրեր, նկարագրեր, որոնք անընդհատ կատարելագործվում են: Մասնագիտության կայացմանն ու զարգացմանը նպաստել են նաև գործընկեր կազմակերպությունները, որոնց թիվն այսօր 5-ն է:

Այսօր սոցիլական մանկավարժի հաստիքը ներառված է հանրապետության տարբեր հաստատություններում՝ ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամում, հմ. 18 հատուկ դպրոցում, ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում /200/, Արաբկիր բժշկական կենտրոնում, այլընտրանքային խնամքի մի շարք հաստատություններում՝ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկներում և այլն:

Բանախոսի կանխատեսումները իրատեսական էին. Եթե մինչ 2025 թվականը ՀՀ բոլոր դպրոցները դառնալու են ներառական, ապա այս ոլորտին առաջիկա 9 տարվա ընթացքում անհրաժեշտ կլինի 1300-1500 սոցմանկավարժ: Երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում նախատեսվող բաժիններին անհրաժեշտ կլինի 60-80 սոցմանկավարժ:

Ամփոփելով զեկուցումը՝ Հ. Թադևոսյանը ներկայացրեց սոցիալական մանկավարժի ինստիտուտի զարգացմանն ուղղված ուղերձներ: Բանախոսը փաստեց, որ հանրակրթական դպրոցներում թյուրըմբռնում կա սոցիալական մանկավարժի հաստիքի անհրաժեշտության վերաբերյալ, թե այն գործում է միայն ներառական կրթության համատեքստում, որ մասնագիտությունը պետք է ընդգրկել բոլոր դպրոցներում, դասընթացը պետք է ներդնել մանկավարժական բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում, իսկ հաստիքը ընդգրկել խնամքի, բժշկական, զինվորական, ոստիկանական, քրեակատարողական հաստատություններում, ստորաբաժանումներում ու հիմնարկներում, տեղական կառավարման համայնքներում:

Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը, ով Հոգեբանության ֆակուլտետի դեկանի պաշտոնավարման տարիներին կանգնած է եղել մասնագիտության ներդրման ակունքներում, անդրադարձ կատարեց նոր մասնագիտության հետ կապված մարտահրավերներին և խնդիրների լուծմանը:

Կրթության հոգեբանության և սոցիալական մանկավարժության դեկան Ռուզան Պետրոսյանը, ում ղեկավարած ֆակուլտետում այսօր իրականացվում է սոցիալական մանկավարժների ուսուցումը, խոստովանեց, որ ստացած ժառանգությունը՝ դժվարությունների ու խոչընդոտների հաղթահարմամբ ձեռք բերածը այսօր շարունակում են: Նա ընդգծեց, որ սոցիալական մանկավարժի պատրաստումը պետք է դիտարկել անպայման հոգեբանության հետ համակցված աշխատանքի արդյունքում:

Ապագա սոցիալական մանկավարժ Միշա Թադևոսյանի բարձրաձայն մտորումները բավականին ուսանելի էին, առաջադրած խնդիրների ու պրակտիկայի արդյունքի եզրահանգումներ, որոնք լուծումներ են պահանջում: Օրինակ, երբեմն ավելի շատ անդրադարձել են «պետք է» և «անհրաժեշտ է», քան «ինչպես» հարցադրումներին: Թյուրըմբռնումներից խուսափելու նպատակով Միշան առաջարկեց պրակտիկայի կազմակերպումից առաջ ունենալ հագամանորեն մշակված կիրառելի մեթոդների, մեթոդիկաների ու տեխնոլոգիաների նկարագիրը՝ շեշտը դնելով գործնական կարողությունների զարգացման վրա:

Հետաքրքիր էին նաև մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Ելենա Խաչատրյանի դիտարկումները մասնագիտական պրակտիկայի վերաբերյալ: Նա աշխատում է Բյուրեղավանի գիշերօթիկ դպրոցում, ընտրել է մի մասնագիտություն, որի մասին գրեթե պատկերացում չուներ, սակայն այսօր արդեն սիրում է այդ մասնագիտությունը և ո-

➢ 8

...կոչում է և առաքելություն

➢ 7

չինչ չի խնայում մասնագիտության զարգացման համար: Նրա կարծիքով պրակտիկայի ընթացքում պետք է ճիշտ ուղղորդել ուսանողներին, ինչը շատ կարևոր է հետագա աշխատանքի կազմակերպման համար:

Անուշ Սարգսյանն էլ անդրադարձավ հանրակրթական դպրոցներում առկա խնդիրներին՝ փաստելով, որ սոցիալական մանկավարժին այսօր դիտում են սոսկ որպես բազմամասնագիտական թիմի անդամի, ստվերում թողնելով նրա իրական գործառույթները: Բանախոսն առաջարկեց դիտարկումների իր տարբերակը՝ պետք է հստակեցնել սոցիալական մանկավարժի պարտականությունները. Դա կնպաստի աշխատանքի արդյունավետությանը:

Ջեռնարկին ներկա էին նաև Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի տնօրեն Հայկուհի Գևորգյանը և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վարչության պետ Աստղիկ Մինասյանը:

«Սոցիալական մանկավարժն ունի-վերսալ մասնագիտություն է, իսկ մեր կենտրոնի կարևոր ձեռքբերումներից մեկն այն է, որ մասնագիտական խմբերում ժամանակին ընդգրկել ենք սոցմանկավարժներին: Եթե գործատուն ուզում է քիչ գումարով առավել բարձր եկամուտ ունենալ, փոքր անձնակազմով արդյունավետություն ապահովել, ապա աշխատանքում պետք է ընդգրկի այս մասնագետներին»,-ասաց Հ.Գևորգյանը:

«Սա այն ոլորտն է, որն անընդհատ ենթակա է փոփոխության, որտեղ միշտ պետք է սովորել, ստեղծագործ միտք ունենալ և ճկուն լուծումներ գտնել»,- օրվա խորհուրդն ու ասելիքը կարծես թե ամբողջացրեց Սոցիալական աշխատանքի նախարարության վարչության պետ Աստղիկ Մինասյանը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Կյանքը՝ հայրենիքին, հոգին՝ արքայությանը

Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստի ամբիոնն անցկացրեց հուշ-ցերեկույթ՝ նվիրված ապրիլյան քառօրյա պատերազմում հայրենիքի համար իր կյանքը զոհեց լավագույն պարող և խիզախ զինվոր, ՀՊՄՀ-ի ուսանող Նորայր Գասպարյանին:

Նորայր Գասպարյանը հետմահու պարգևատրվեց Հայաստանի ազգային պարարվեստի միության բարձրագույն պարգևով՝ «Վահրամ Արիստակեսյան» հուշամեդալով:

«Կապանում բոլորը ճանաչում էին տաղանդավոր և կենսախինդ Նորայրին. դեռ փոքր տարիքից պարուսույցը հասցրել էր իր ապրած տարիների ընթացքում լուրջ հաջողությունների հասնել, վայելում էր բնակչության սերն ու հարգանքը, ընկերասեր էր, բարի, նպատակասլաց ու նվիրվող: Ընդամենը 3 ամիս և մի քանի օր էր մնացել, որ վերադառնար, սակայն հայրենքի հանդեպ սերն ու պատասխանատվությունը Նորայրին դրդեցին հերոսաբար նահատակվել և համալրել կապանցի անմահների շարքը»,- այս խոսքերով հերոսին նկարագրեց հաղորդավար Սարգիս Նաջարյանը՝ հավելելով՝ ողջ Կապանը ցավում և միաժամանակ հպարտանում է, որ ունի նման հայորդի, ով բոլորին ապացուցեց, որ մերօրյա սերունդն էլ պատրաստ է իր կյանքով անգամ պահել հայրենի հողը և փոխանցել հաջորդ սերունդներին՝ վառ օրինակ լինելով իր աշակերտներին համար:

«Նորայրը կյանքով լեցուն էր և հենց այդ ակտիվությամբ էլ նետվեց ռազմաճակատ, իր հոգին տարավ այնտեղ: Բոլորս միշտ մեր սրտերում վառ ենք պահելու Նորայրի անունն ու հիշատակը. փա՛ռք քեզ, մեծանուն զավակ և Հերոս: Սա մեր ուսանողների համար ևս մեկ առիթ է վերապրել այն հայրենասիրությունը, որը Նորայրը մեզ պատգամել է՝ ապրել հայրենիքի համար, եթե կարիք կա՝ գլուխն անգամ տալ հայրենիքի համար՝ այս պատգամը միշտ պահեք ձեր սրտում»,- ասաց Պարարվեստի ամբիոնի վարիչ Կարեն Գևորգյանը: Վերհիշելով Նորայրի ընդունելության քննությունը՝ ամբիոնի վարիչն ընդգծեց՝ նա այնքան լավ էր պարում, այնքան էներգիայով, որ հանձնաժողովը խնդրեց մեկ անգամ ևս պարել: «Բանակ գնալուց առաջ Նորայրն ասաց՝ ոտքերս կկոշտանան, բայց ձեռքերս՝ ոչ. ցավոք ձեռքերն էլ կոշտացան, նա անմահացավ և այդ անմահությամբ մեզ պատգամեց իր չապրած կյանքով՝ սիրեք հայրենիքը»,- ամփոփեց Կարեն Գևորգյանը:

Նորայրի մայրը՝ Նոնա Աթաջանյանը, հուշ-ցերեկույթին հիշեց որդու վերջին խոսքերը. «Առաջինն ինքս եմ գնալու առաջնագիծ, անհրաժեշտության դեպքում նույնիսկ գլուխս, կյանքս կտամ հանուն հայրենիքի: Այդպես էլ եղավ. նա պարելով նստեց տանկն ու գնաց. նա իր վերջին պարը պարեց ու չվերադարձավ»:

Մշակութաբան Գարեգին Գևորգյանը նկատեց, որ այս ձեռնարկը վկայում է՝ իսկական զավակներին հայրենի հողը շատ ավելի է սիրում, քան սովորական մարդկանց, դրա համար նրանք ավելի շուտ են գնում դեպի հող, քան նրանք, ովքեր ավելի երկար են ապրում:

«Կուզենամ, որ այս աշխարհում նրանք, ովքեր գոնե մեկ անգամ պարելիս բռնել են Նորայրի ձեռքը անպայման նրա հիշողության և տեսակի մասով զորավիգ լինեն նրան: Պարողի հոգին միշտ հսկելու է բոլորին վերևից, փառք նրանց, նրանք իրենց կյանքը տվեցին հանուն հայրենիքի: Նորայրը կարող էր պարը տանել հեռուներ և այդ արվեստով զարմացնել շատերին: Հպարտ եմ, որ այդպիսի զավակներ ունենք և ունենալու ենք»,- ասաց Գարեգին Գևորգյանը:

Ձինակից ընկեր Ազատ Գալեյանը ցավով վերհիշեց ծառայության լավագույն տարիներն ու Նորայրի հետ ընկերությունը: «Պատերազմի ժամանակ միասին նստեցինք տանկ, հասանք առաջնագիծ և հիշում եմ՝ նկատեցի միայն իմ տանկն է մնացել, մյուսները չկան: Ապագայի հետ կապված շատ պլաններ ունեինք, որ պետք է միասին իրականացնեինք, բայց, ավա՜ղ, պատերազմն այդ ամենը հօդս ցնդեցրեց: Ես հպարտությամբ եմ միշտ հիշում նրան, մենք պարտավոր ենք հիշել նրան ու մեծարել»,- ասաց Ազատը:

Նորայրի պարի զուգընկերուհի Իննա Ստեփանյանը 6 տարի պարել է Նորայր Գասպարյանի հետ: «Նա կրակ էր, և այդ կրակով ջերմացնում էր բոլորիս: Աննկարագրելի էներգիայով էր լցված, օրվա մեծ մասն անցկացնում էր պարասենյակում: Չափից դուրս ընկերասեր էր, ամեն ինչ կաներ ընկերների համար: Շատ նպատակներ ու երազանքներ ուներ, որոնք անավարտ մնացին, իմ վերջին հաղորդագրությունն ուղղված նրան՝ ևս անպատասխան մնաց»,- Իննան հուզված վերհիշեց Նորայրի հետ իրենց վերջին հեռախոսային զրույցը:

Նորայր Գասպարյանին հարգանքի տուրք մատուցեցին ընկերները՝ նրան նվիրելով պարային և երաժշտական կատարումներ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Մշակութային միջավայրում

Մանկավարժական համալսարանի 4 դասախոսներ մասնակցեցին է Լիտվայի Նիդա քաղաքում կայացած միջազգային պլեներին:

Միջազգային պլեներին մասնակցում էին նկարիչներ Հայաստանից, Հնդկաստանից, Լեհաստանից, Գերմանիայից, Սերբիայից, Բելառուսից և Ռուսաստանից:

Օրեր շարունակ հայ և այլ ազգի նկարիչներն աշխատել են, ստեղծագործել նավահանգիստներով և բազմաթիվ այլ տեսարժան վայրերով հարուստ քաղաքում, այնուհետև Նիդայի «Ագիլա» մշակույթի կենտրոնում ունեցել աշխատանքների համատեղ ցուցադրություն:

Պատվիրակության ղեկավար, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանի կարծիքով միջազգային պլեներները տարբեր երկրների արվեստներին ծանոթանալու, դրանց առանձնահատկությունները սեփական ստեղծագործություններում կիրառելու բացառիկ հնարավորություն են: Մանկավարժական համալսարանի՝ միջազգային պլեներ կազմակերպելու նախորդ տարվա հաջող փորձը իսկական առիթ էր սկզբնավորելու տարբեր երկրներում նման պլեներներ կազմակերպելու համար:

«Այլազգի նկարիչների հետ շփումը, եվրոպական երկրներում ժամանակակից կերպարվեստի զարգացումը նրանց հետ քննարկելը կտա իր արդյունքը նկարչի ստեղծագործական կյանքում»,- նշեց Փ.Միրզոյանն ու վստահեցրեց, որ Լիտվայի միջազգային պլեների ՀՊՄՀ-ից մասնակից դասախոսները հետևություններ կանեն և ձեռք բերված նորը դասախոսությունների միջոցով կփոխանցեն ուսանողներին, իսկ ստեղծագործությունների շնորհիվ՝ արվեստասերներին: Գեղանկարիչը հավելեց նաև, որ Հայաստանյան պլեները մեծ արձագանք էր գտել օտարազգի նկարիչների շրջանում, իսկ Ազգային պատկերասրահում նրանց աշխատանքների ցուցադրության կազմակերպումն ու այդ նկարները պատկերասրահի ֆոնդին նվիրաբերելը իրենց համար մեծագույն հպարտություն է:

Միջազգային պլեներները կլինեն շարունակական. առաջիկայում նման ձեռնարկ նախատեսված է անցկացնել Վիլնյուսում:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Այցելություն Մեծամորի հնագիտական թանգարան

ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները շարունակական պրակտիկայի շրջանակներում ՀՊՄՀ հենակետային վարժարանի հումանիտար (հոգեբանություն) 11-րդ դասարանի աշակերտների հետ պրակտիկայի ղեկավար Հայոց պատմության ամբիոնի դոցենտ Արմինե Եփրիկյանի ուղեկցությամբ այցելեցին Մեծամորի հնագիտական թանգարան և Ք.Ա 3-2-րդ հազարամյակներով թվագրվող Մեծամորի հնագիտական տեղանք: Ուրախալի էր այն փաստը, որ ուսանողներին սիրով ուղեկցեց նաև Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմաբան-հնագետ Աշոտ Փիլիպոսյանը: Խումբը այցելեց թանգարան և ցանոթացավ թանգարանում առկա գտածոներին, որոնց վերաբերյալ ուշագրավ տեղեկատվություն հաղորդեց պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը: Այնուհետև ուսանողները և աշակերտները ծանոթացան տեղանքին, տեղում ներկա գտնվեցին մի շարք հնագիտական աշխատանքների:

Ավագ դպրոցի աշակերտներին այցը ոգևորեց և հատկապես մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ խորհելու առիթ տվեց:

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:

Հղումը պարտադիր է: Թերթը չի վաճառվում:

Հանձնված է տպագրության 20.10. 2016 թ.